

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հասը 10 փարսյ է : — Պօլիս բաժանորդ բլլալ ու գողը մէկ արժաթի Մէճիա պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, գարձեալ 100 թուոց համար , թղթատարութեան ծախքէ ազատ բլլալով : — Մանուցման տողը 40 փարսյ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերարերեալ նամակ եւ ուրիշ օր եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն Ի Ալալթիա Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ վարի դրանը կից Նոր Գրատունը :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Սերաստիայէն 5 ժամ հեռի թուղչ լատար գիւղէն նոյ. 4 թուով գրուած նամակի մը մէջ հետեւեալ լուրերը կկարգամք :

1^o. « Հրեշտակապետ վանքին վիճակը եթէ հարցուի, արդարեւ շատ գէշ է. այսօրուան օրս ուտելու հայ անդամ չկայ որ մշակ կամ սպասաւոր մը պահէ. վանական դոյքն ալ հեարդեալ ստաւելու վրայ են. բայց զարմանք չէ, անտէր վանք մը ինչպէս կըլլայ : Եթէ հարցուի թէ այս ինչ բանը ո՞ր է, իսկոյն սրտատխտան կը արբուի թէ սքարաքին արուած է : Կը յիշեմ թէ ժամանակաւ իմ տղայութեանս ատենը այս վանքը ի հիմանց նորոգուելէն ետքք, երկու սափոր լեյուռն ոսկի ալ Ս. Նշանու վանքը տարուեցաւ. չէ՞ որ գարձեալ նոյն վանքն է, մուտքերը՝ նոյն, արտերը՝ նոյն. չմոռնանք ըսել թէ այն ատեն անթիւ ոչխար ու նախիր ունէր վանքը :

2^o. « Մայիս ամսոյն վերջերը գիւղիս դպրոցին շինութիւնն սխառ. թէ եւ միայնակ բայց խիստ գեղեցիկ

եղաւ. Ասիոյ մէջ գրեթէ նմանը չկայ : Կ. Պօլսոյ Անճնուէր Բնակրութեան կողմանէ մեր գիւղին եղած բարեբարութիւնը չնորհակալութեան արժանի է, վանքի 2500 դուռուչ եւ պատուհաններուն բոլոր ազակիցները զբոկեցին : Դպրոցը կիւրակէ օրերն ալ կբացուի եւ դասախօսութիւններ կըլլան :

3^o. « Տաւշանլու գիւղին մէջ ուր միայն 8 տուն հայ կայ, վարժարան մը շինուեցաւ, գիւղիս Տ. Առաքել քահանայի ջանիւք, որ նոյն գիւղի քահանայութեան պաշտօնն ալ կիխրէ : Կյուսամ թէ այսօր վաղը վարժապետ մ'ալ կբերուի :

4^o. « Երկրին բերքերը այս տարի այնչափ առատ չեն : Ժամանակէ մ'ի վեր արջաւոց մէջ մահացու հիւանդութիւն մը տիրած ըլլալով, մեծ կտտորած ըրաւ եւ կընէ. ուստի երկրագործք խիստ նեղութեան մէջ են. թող գտներու եւ աւաղակներու երեսէ կրած նեղութիւննին :

5^o. « Այս օրերս կոտորն գիւղի եկեղեցին բոլորովին կողոպտուած է, եւ միայն սիւները մնացած են . . . :

6^o. « Մեր գիւղէն հօտ մը ոչխար

այսօր տարին բռնութեամբ : — « Գո-
ղը բռնէ բեր » կըսուի , եթէ բողոք
ըլայ . . . » :

Ինչպէս յայտնի է , այս լուրե-
րուն ամենքն ալ գոհացուցիչ չեն : Կան
անանկ լուրեր , որ ազգային Պատրի-
րիարքարանի խորին ուշադրութեան
արժանի են : Հարկ չէ գիտել թէ Սե-
բաստիոյ Առաջնորդական վիճակը ան-
յապաղ բարեկարգութեան կարօտ է :
Գեր . Երեմիա Եպիսկոպոսը Պատրիար-
քարանի կողմանէ հոն կգանուի , բայց
չկրնար ըստ արժանւոյն դործել , ո-
րովհետեւ իւր պաշտօնը հաստատե-
լու համար պէտք եղած բոլոր պաշ-
տօնական գրերը տակաւին իրեն հա-
սած չեն . . . Ինքն ալ չգիտէր թէ պի-
տի մնայ Սեբաստիա , թէ պիտի դառ-
նայ . . . Այսպիսի անփէր ու անօր
վիճակի մը մէջ ի հարկէ ժողովրդեան
վրայ նեղութիւնը կձանրանայ և վար-
կենէ վարկեան գանդատները կաւել-
նան :

Յիշեալ լուրերուն մէջ Տալչանլու
գիւղի 8 անօր ազգայնոց համար
վարժարանի մը հաստատութիւնը ,
թնոլ կարգան մեր Պօլսոյ Իսկիւտարի
Խճախիյէի թաղի ազգայինք : Այս
թաղին մէջ ուր 400ի չափ տուն ազ-
գայինք կգանուին , ուր մէկ եւ աւելի
դպրոցներու ծախքերը իրենց քը-
սակէն հողալու կարողութիւն ունե-
ցողներ կգանուին , այս թաղին մէջ
կըսեմք՝ կայ վարժարան . . . : Ահա
յետինքն առաջինք , եւ առաջինքն
յետինք կըլլան : Տալչանլուի պէս
գիւղի մը մէկ քանի ազգաս ազգա-
սինք դպրոց կանենան , իրենց գա-
ւազաց ուսման ու կրթութեան համար

հոգ կտանին . իսկ Պօլսոյ Խճախիյէ-
ցիք անտարբեր կանենուին , եւ չեն
լսեր կամ լսել չեն ուզեր — չեն կար-
միր — վերջին օրերս յաճախյաեղի ու-
նեցած հրատարակական արդար բայց
խիստ քննադատութիւնները :

Մանգումէի 1087 թուոյն մէջ
Ստեփան Զարգարեան ստորագրու-
թեամբ նամակ մը տեսանք : Նամա-
կազիրը սուտ ու սխալներ գանելով՝
Փունջի 432 թուոյն մէջ Սեբաստիոյ
առաջնորդական խնդրոյն վերաբեր-
եալ հրատարակութեան մը մէջ , —
ճշմարտութիւնը յայտնելու ելեր է :

Ստեփան Զարգարեան իրերս ճըշ-
մարտութիւն կրտէ թէ՛ կարապետ Ե-
պիսկոպոսը Սեբաստիոյ առաջնորդը
չուզող հանրագիր եկած չէ Բ. Գու-
սը , մինչդեռ փունջն ըսած էր թէ
ուզող ու չուզող կուսակցութեանց
կողմանէ նոր հանրագրութիւններ հա-
սած են : Այս անձը կպահանջէ փուն-
ջէն որ կարապետ Եպիսկոպոսը չու-
ղելու համար եկած հանրագրին ակ-
ղը ցուցնէ , ապա թէ ոչ՝ ետ առնէ
գրածը :

Ստեփան Զարգարեանին այս հը-
րամանը ահա կկատարէ փունջը : Այ-
սօր դարձեալ կկրկնէ փունջը թէ Բ.
Գոսար եկած է կարապետ Եպիսկոպոսի Առաջ-
նորդութիւնը չուղելու համար ոչ
կերև ընդունելի վաւերացեալ վսեմ : Կասա-
կալն : Ահա եկածը չուղելու հանրա-
գիր է , եկած ակղը Բ. Գուսն է .
վաւերացուողը կուսակալն է :

Զարգարեան Ստեփանին այս հը-
րամանը կատարելէն յետոյ , հարկ կը
համարվաք իրեն մէկ կարծիքը հեր-

րիւ . այն է թէ՛ փունջի խմբագիրը
 լիակատար զէմ, և ինքը՝ և ուրիշ ո՛վ որ
 ազգ՝ աղատ են կարապետ եպիսկո-
 պոսը գարձեալ իրենց առաջնորդ
 առնելու համար՝ ամեն ջանք ու գո-
 ում գոչում ընել : Թող գիտնայ ին-
 քը և ուրիշ ո՛վ որ են իւր ընկերնե-
 րը, թէ՛ փունջի խմբագրին չբնաւ ը-
 լալու բան չկայ, եթէ իրենք յաջողին
 կարապետ եպիսկոպոսը իբրև Սեբաս-
 ական Առաջնորդ իրենց գլխուն վրայ
 նստեցունելու . . . :

Բայց ո՛վ է Զարգարեան Ստեփա-
 նը, որ Սեբաստիոյ խնդրոյն վրայ կը
 խօսի : Ծառ սեբաստացոց հարցու-
 ջինք չկրցան գիտնալ : կարապետ ե-
 պիսկոպոսի սիրահար Սեբաստացի
 Ստեփան մը Ղալաթիա Գոմիսիօն խա-
 նը կայ, սակայն անոր մտկանունը
 պաւլթերս գիտէինք մինչև հիմա :

Ինչպէս արդէն ծանուցած էինք,
 գեր . Հասունեանի փոխանորդ գեր .
 Ալարեան երկուշաբթի օրը մէկերկու
 ուրիշ կըրեականաց հետ ազգային
 Պատրիարքարան երթալով ամեն . իը-
 ղիմեանի պատրիարքական գահակա-
 լութիւնը շնորհաւորեց :

Նորին գերապատուութիւնը պարտ
 ու պաշտած յարգանք ընդունուե-
 ցաւ : Պատրիարքարան հասնելուն
 պէս, մեր պատրիարքական փոխա-
 նորդ Հայրն մէկքանի վարդապետաց
 հետ գլխաւորելով մեծ խորհրդարա-
 նը տարաւ, ուր ընդունուեցաւ ա-
 մեն . Ս . Պատրիարք Հօրմէն : — Այս
 տեսակցութիւնը քառորդի մը չափ
 տեւեց :

— Պրուսայի Առաջնորդ Գեր . Տ .
 Բարթոլոմէոս Ս . Սրբեպիսկոպոսը
 մէկքանի օրէ ի վեր մայրաքաղաքս
 եկած է, կարծեմք՝ ամեն . Ս . Պատ-
 րիարք Հօր գահակալութիւնը ան-
 ձամբ շնորհաւորելու պատճառաւ :

— Խազիւղի Ներսիսեան վարժա-
 րանի աշակերտք երէկ ամեն . Ս . Պատ-
 րիարք Հօր ներկայանալով, Ուղերձ
 մը կարդացեր և Նորին բարձր Սրբազ-
 նութեան շնորհակալութիւններն ըն-
 գունելով մեկներ են :

— Իսկիւտարի Սէլամիյէ թաղին
 մէջ հանրագիր մը ստորագրութեան
 հանուեր է, որով ազգային Պատրիար-
 քարանէն հրաման կկնդրուի եղեր
 թաղային քուէարկութեամբ նոր թա-
 զական խորհուղ մը ընարել ըստ ար-
 բանագրութեան Սահմանագրութեան :

ԽՈՒՆ ԼՈՒՐՆԵՐ

Ռուսայ կայսրը հրաման րրեր է
 որ հրէայք կարող ըլլան այսուհետեւ
 սինակոկա մ'ունենալ, մինչդեռ մին-
 չեւ հիմա թոյլատուութիւն չկար :

— Ասկէց յառաջ փարիզի մէջ հը-
 րատարակուող եւ ետքը կառավարու-
 թեան կողմանէ խափանեալ Լանթերն
 անուն երեւելի լրագրին խմբագրա-
 պետը մօտերս ուրիշ անունով լրագիր
 մը պիտի հրատարակէ եղեր :

— Յունաստանի թագաւորը թա-
 գուհոյն հետ իւր հայրենիքը եր-
 թալով՝ ժամանակ մը հոն պիտի ան-
 ցունէ, եւ բացակայութեան ատենը
 թագաւորական փոխանորդ պիտի
 թողու ելեր իւր հօրեղբայրը :

— Աւարիոյ կայսրը ծպտեալ կեր-

պարանօք - Հռոմ ալ պիտի երթայ եղեր ի տես իւր քրոջը՝ որ Նարոզիի գահակորոյս թագաւորին լծակիցն է և այս օրերս զաւակ մը ծնած է :

— Նարոզին կայսրը հրաման ըրեր է որ , փարիզի արևելեան լեզուած վարժարանին մէջ այսուհետև տանկերէն՝ արարերէն՝ պարսկերէն՝ հայերէն՝ յունարէն՝ չիներէն՝ ճարտնրէն՝ և ուրիշ լեզուաց դաստիասութիւններ ալ ըլլան :

— Ամսոյս 4ին , ճէղայիբի մէկքանի քաղաքներուն մէջ խիտ սաստիկ գետնաշարժեր պատահեր , և արքունի ու հասարակաց բազմութիւ շէնքեր փլեր են : Մարդու կորուստ չէ եղեր , որովհետև առաջուց լեռները ելած են եղեր ինքզինքնին աղտելու համար : Միայն կին մը փրատակներու տակ մնալով , խեղդամահ եղեր է :

Մերաստիոյ խնդրոյն համար կազմուած յանձնաժողովին անդամներէն վարժապետեան գեր . Ներսէս սրբազանը հրաժարեր է : Կյուսումք որ ամեն . Ս . Պատրիարք Հայրը չընդունիր այս հրաժարականը , ըստ որում գեր . վարժապետեան բաւական տեղեկութիւն ունի Մերաստիոյ խնդրոյն :

Առաջիկայ 1867 տարւոյն Օրացոյցը , երեսուցիկնայ վանական մամլէն գեղեցիկ տպագրութեամբ ի լոյս ընծայեալ , կձախուի մայրաքաղաքիս բոլոր գրաւթանաց քով :

Պօլիս Մահմուտ փաշայի վերի գըլուխը Գաշըզի խանի քովը գրատունը ամեն տեսակ պիտանի գրքեր ու

ատարակներ , կազանդչեքտալու յարմար , կձախուին աժան գնով : Նոյն պէս յիշեալ գրատունը կգանուին գաղղիարէն , ու անգղիարէն և ուրիշ լեզուներով կարենոր գրեանք :

Ասպարէզ Ազգային անուն հրատարակութիւն մը մայրաքաղաքիս բոլոր գրաւթանաց քով կձախուի : Ասոր հեղինակը Անճուէր ընկերութեան պանդուխտ աշակերտներէն մէկըն ըլլալով , քաջալերութեան արժանի է :

Պօլիս Գալափեան գրատունը Յական զուրուշի կձախուի ատարակ մը որ կսովրեցունէ կերակուրներ եփելու և խմորեղէններ շինելու եղանակը :

Փունջը ձեռքէ ծախուելէ զանազանուի նաև՝ Սողա Եօգուչու Գալափեան ու Արևելեան և Մահմուտ փաշա իզմիրլեան գրաւթանաց խանութները և Գաշըզի խանի քովի գրատունը :

Կ. ՊՈԼԻՍ . — ԳՈՆՍՈՒԻՏԷ

		ԻՇ	Գ
24 նոյեմ. երեք . երեկոյ	գոյուեցաւ	48	32
23 նոյեմ. չորեք . առաւօտ	բացուեցաւ	48	37
	ժամը չորսին	48	36

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ
Հ . Ս . ԱԼԱՃԱՃԵՆ
[ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ո . Յ . ԳՈՐԾՅԱՆՍ